Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-370-25.10.2013-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 103.1-րդ հոդվածով.

«**Հոդված 103.1. Գլխավոր դատախազի հաղորդման ներկայացումը և քննարկումը**

1. Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը Հանրապետության Նախագահին և Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

2. Ազգային ժողովի նախագահը հաղորդումը ստանալուց հետո՝ երկօրյա ժամկետում *դնում է շրջանառության մեջ* և մեկամսյա ժամկետում ընդգրկում է Ազգային ժողովի չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում:

3. Հաղորդումը քննարկվում է Ազգային ժողովի նիստում սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝

1) մինչև 1 ժամ տևողությամբ զեկուցմամբ հանդես է գալիս Գլխավոր դատախազը.

2) հարակից զեկուցումներ չեն լինում.

3) հաղորդման քննարկումն ավարտվում է Գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՐԱՑՄԱՆ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը ենթակետը	Առաջարկությունը	Հեղինակների եզրակացությունը
1	Պատգամավոր Դ.Հարությունյան	2-րդ մաս	«ուղարկում է մշտական հանձնաժողովներ» բառերը փոխարինել «դնում է շրջանառության մեջ» բառերով:	Ընդունվել է:
2	Հեղինակներ	Նոր մաս	Նախագծով լրացվող 103.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3-րդ մասով. «3. Հաղորդումը քննարկվում է Ազգային ժողովի նիստում սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևյալ տարբերությամբ՝ 4) մինչև 1 ժամ տևողությամբ զեկուցմամբ հանդես է գալիս Գլխավոր դատախազը. 5) հարակից զեկուցումներ չեն լինում. 6) հաղորդման քննարկումն ավարտվում է Գլխավոր դատախազի եզրափակիչ ելույթով՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:»:	+